



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212-MU 6-0710

Թիւ 28917
Մարտ 2, 1978

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Սառլթ Միլվորթի.

Սիրելի Հայր Արշակ,

Ստացած ենք 1978 Փետրուար 19 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 21ին գումարուած համայն-
քիղ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի հինգ անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկստի ունենալով որ 2եր ժխական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ատենագրութեան մէջ նշուած այն անձերը (2եր նամակին մէջ տրուած է
անունը Միջրան Պալեանի որուն տրուած է տասը քուէ) որոնք ընտրուած
են իբրեւ անդամ ժխական Խորհուրդի: Ստորեւ կուտանք ցանկը:

Հաճեցէք փութով Առաջնորդարան զրկել ժխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց
ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

- ժան Կիւրիանեան 42 քուէ
- Րուսէլ Զայշեան 41 "
- Մէյեր ճանտիկեան 38 "
- Հարըլտ Պէյլէրեան 36
- Նագար Պալեան 29